ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA MINISTRY
OF LABOUR AND SOCIAL ISSUES
"SPECIALIZED
CHILDREN'S
HOME OF KHARBERD"
SNCO

Մասիսի տեղական գանձ.բաժանմունք
h/h 900438000318

## *ՈՐՈՇՈՒՄ*

20.12.2023թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության ի դեմս Ս.Մուրադյանի/ և «Սավա»ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար *սննդամթերքի մատակարարման ««ԱՄՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-Եխ-5-Խ»* ծածկագրով պայմանագիրը ամբողջությամբ լուծելու մասին.

## *ՊԱՐԶԵՑԻ*

20.12.2023թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս Ս.Մուրադյանի/ և «Սավա» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման *«ԱՄՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-Եխ-5 Խ»* ծածկագրով ծածկագրով:

Համաձայն վերը նշված պայմանագրի 1.1 կետի պահանջների սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին /Գնորդին/ «Սավա» ՍՊԸ-ն /Վաճառողը/ պետք է մատակարարեր պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքները,մասնավորապես,սոխ,լոբի կանաչ, սմբուկ,կարմիր բազուկի տերև, շաքարավազ, ջեմ, մուրաբա, խավիար սմբուկի,աղ կերակրի, ոլոռ,եգիպտացորեն պահածոյացված,լոբի հատիկ, հաճար, բլղուր,մեղր,ոսպ և բրինձ/տես պայմանագրին կից տեխնիկական բնութագիրը/, իսկ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը պարտավորվում է ընդունել ապրանքները ու վճարել դրանց համար/տես պայմանագրի առարկան 1.1կետը/:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի պատասխանատու անձի կողմից կազմվել են հայտեր,արձանագրություններ և դրանցով սահմանվել են ժամկետներ տեխնիկական բնութագրով սահմանված սննդամթերքները սահմանված ժամկետներում մատակարարելու վերաբերյալ և քանի որ «Սավա» ՍՊԸ-ի կողմից չեն պահպանվում պայմանագրով սահմանված էական պայմանները, մասնավորապես, վերը թվարկված բոլոր ապրանքները, բացառությամբ ընական հյութի /հյութ մրգերի/,քանի որ 2024 թվականի օգոստոսի 30-ին արդեն իսկ միակողմանի լուծվել էր պայմանագիրը, «Վաճառող» կողմը մնացած մասով պետք է շարունակեր մատակարարել պայմանագրով սահմանված և վերը թվարկված ապրանքները:

Նույն պայմանագրի 8.9 կետի դրույթների համաձայն Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Հիմք ընդունելով այն փաստական հանգամանքը, որ մնացած ապրանքները չեն մատակարարվել, դրանք են սոխ, լոբի կանաչ, սմբուկ, կարմիր բազուկի տերև, շաքարավազ, ջեմ, մուրաբա, խավիար սմբուկի,աղ կերակրի, ոլոռ, եգիպտացորեն պահածոյացված,լոբի հատիկ, հաճար, բլղուր,մեղր,ոսպ և բրինձ սահմանված ժամկետներում/տես կից ներկայացվող հայտերը և արձանագրությունները/,ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ* ծածկագրով կնքված պայմանագրի էական պահանջներից, անհրաժեշտություն է առաջացել արդեն ամբողջությամբ լուծելու 20.12.2023 թվականին *«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ ծածկագրով* պայմանագիրը:

Ելնելով վերոշարադրյալից.

**ՈՐՈՇԵՑԻ**

1/2024թվականի սեպտեմբերի 20-ին ամբողջությամբ լուծելու 20.12.2023թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության /ի դեմս Ս.Մուրադյանի/ և «Սավա» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ»* ծածկագրով պայմանագիրը:

2/Օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել «Սավա»ՍՊԸ-ին պայմանագրի լուծման վերաբերյալ :

3/Կատարել մատակարարման պայմանագրով սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ

Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ
0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)
091 42 79 60
էլ.հասցե՝ kharberd-mankatun@mail.ru

Ararat Marz, Nor Kharberd
0236 6 00 25 (Masis) (Nor Kharberd)
091 42 79 60
e-mail: kharberd-mankatun@mail.ru